


ԱՇուշակաճ Երանճեան

9504

Լապտեր



Ալեքսանդրապոլ
1915

5041

1916 № 770

41

ՄՆԵՅԵԸՆ ԷՅՐԱՄՈՒՆՆԵՐ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОССТАНОВЛЕНИЯ
Академии Наук
СССР

Լ Ա Պ Տ Ե Ր



ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ԿԱՄԱԻՈՐՆԵՐԻ

ԱԼԷԻՍԱՆԴՐԱՊՈԼ

Տպարան Յ. Սամոյլանցի

1915

891.99
5-41

1000
1000

arm
6041

891.99

5-41

ՄՆԱՅԱԿԱՆ ԷՏՐԱԾՆԵՆ

≡ L. O. M S E R ≡



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ԿԱՄԱԻՈՐՆԵՐԻ



ԱԼԷԲՍԱՆԴՐԱՊՈՒ
Տարսան Յ. Սաևոյանցի

1915

ԶԻՆԻՈՐԻ ՀՐԱԺԵՇՏԸ °

Սիրուհիս ինձ համար գուն մի լաց լինիր,
Թէկուզ ես մեանեմ՝ երբէք մի ախրիր.
Մի լար, հոգեակս, ինձ զուր մի տանջիր,
Յիշիր, հոգեակս, մեր տանջանքները,
Թշնամուց գալած այն հարւածները,
Մի խնայիր, գուն ինձ բեր իմ զէնքերը.
Որ գնամ լուծեմ ես իմ վրէժը:
Զէ որ տաճկի ձեռք շղթաներով
Կապւած կապկապւած էինք գարերով,
Հիմայ էլ ժամանակ պէտք չէ կորցնել,
Պէտք չէ մեր կիանքը երբէք խնայել:
Հայրս գերեզմանից վրէժ է գոռում.
Նրա ոսկորներն հանգիստ չեն առնում
Դեռ մինչև այսօր նրա գերեզմանից
Տխուր հառաչանքների ձայներ եմ լսում:
Նրա պէս հայրեր, քոյրեր, եղբայրներ,
Նահատակեցան քաշին տանջանքներ,
Հրմայ մեզ պէտք է կռել անխնայ,
Որ քանդենք գարերով կապւած շղթաներ:
Դէ՛հ, մնաս բարեւո՛ւ, էկ, իմ հոգեակս,
Ահա քեզ կուտամ վերջին համբոյրս,
Բէ՛ր, մին էլ տեսնեմ, սիրի՛ուն բալիկս,
Ու յանձնեմ ես քեզ մինչև յետ գալու:

ՄԻ ԼԱՐ, ԲԼԹՈՒԼ

Մի լար, բլբուլ, շատ մի ախրիր,
Մի լար, այդքան քեզ մի տանջիր,
Կանցնի՛ ձմեռ, կուգայ գարուն,
Կը բացւի վարդը քո սիրուն:
Կանցնին այս սև ախուր օրերը,
Մի լար, սրբի՛ր քո աչքերը:

50411-ախ



36149-66

2003

Կը դայ կրկին նոր դարունը,
 Չը մօռանաս քո վշտերը:
 Ա՛խ, բլբուլ ջան, իմ գարտն էլ
 Քո գարտի պէս շատ մութն է,
 Մի լար, մի լար, իմ սիրտն էլ
 Քո սրտի պէս խոցւած է:
 Չէ՞ որ իմ էլ սիրած եարիս՝
 Քաշին տարան ինձանից,
 Թողին տխուր, ոլոր-մոլոր,
 Խեղճ ու փոքրիկ բալէքիս:

Դ Է Պ Յ Ա Ռ Ա Չ °

Հէրիք է, քաջ եղբայրներ,
 Հէրիք, ինչքան մենք տանջւենք,
 Առէք ձեր սուր, նիզակներ,
 Մեր թշնամու գէմ կուենք:
 Քանի մենք խեղճ ու մոլոր
 Թափտոենք տարի բոլոր,
 Ջրկւած մեր հայրենիքից
 Ու մեր խղճուկ մայրերից:
 Դէհ, վեր կացէք, եղբայրներ,
 Պատրաստեցէ՛ք ձեր զէնքեր
 Պատրաստեցէ՛ք կուելու,
 Խեղճ հայրենիք փրկելու:
 Հէրիք ֆնաք խեղճ ու մոլոր,
 Այս շուն տաճկի ձեռքի տակ,
 Հէրիք ֆնանք մենք միշտ գերի
 Շղթաներով կապկապած:

ՎԻՐԱԻՈՐ ՀԱՅՐՈՒԿԸ

Ամպիլ է երկինքը, անձրև է դալիս,

Անձրև է գալիս, ամպեր գոռգոռում,
 Աշխարհն ամբողջ արիւն է լալիս,
 Ժայռերն ամբողջ արձագանք տալիս:
 Նայում եմ շուրջս խոր անի քաշելով՝
 Ես լաց եմ լինում՝ աչքերս սրբելով,
 Ես լաց եմ լինում՝ դէս դէն նայելով,
 Խոր անի եմ քաշում վէրքս բռնելով:
 Կուրծքիցս վիրաւոր, անտէր, անպաշտպան,
 Ընկած եմ խոնաւ, գետնին վայր քնկած,
 Որտեղ եմ ամպեր, դղրդում աշխարհ,
 Թանձր մառախուղը չորս կողմս պատած:
 Ամպիլ է երկինքը, չորս կողմս դուման,
 Շուրջս նայում եմ, ընկերքս չկան,
 Սիրտս լցւեցաւ, մոռցայ ամեն բան,
 Մոռացայ վէրքերս, առայ չրացան:
 Երբոր շարժեցայ՝ նւագեց շունչս,
 Արդէն իզուր էր, խոր էր վէրքերս,
 Սկսեց թուլանալ նիհար ձեռքերս,
 Ա՛խ, ռւր են արդեօք, ռւր են ընկերքս:
 Ո՛հ, Աստուած իմ, Աստուած, գթն հայերուս,
 Գթն, մի թողուր մեզ ախուր, անյոյս,
 Գոնէ դուն սրբիւր հայի արցունքը,
 Իզուր չկորչի նրանց տանջանքը:

Ս Գ Ա, Ս Ո Խ Ա Կ

Սգան, սոխակ, մտիւր այն մութ անտառում,
 Սգան և լաց քո վշտերն այն մթնում,
 Աշխարհն ամբողջ լաց են լինում և ողբում,
 Չկայ մէկը, որ օգնէ մեր ցաւերուն:
 Աշխարհն արեան ծով է դարձել ահագին,
 Սուզ ու զարտը բազմել ամենքի սրտին,

Սոխակ, մի սպասիր այն սիրելի քո վարդին,
Դուն էլ սգան, ընկեր գարձնի մեր վշտին:
Ամբողջ լեռներն զիակներով զարդարեամ,
Ծաղիկների զէզ կարմիր արիւնով ներկեամ,
Սգան, սոխակ, քո վարդն էլ է թառամամ,
Քո վարդի տեղ անթիւ գիակներ են փռւամ,
Աշխարհն ամբողջ լաց են լինում և ողբում,
Լաց են լինում, արիւն արցունքներ թափում,
Ամեն կողմից հառաչանքներ են լսում,
Սարեր, ձորեր թնդանոթներ են գոռում:
Ա՛խ, սոխակ ջան, թոխր հեռու, շամ հեռու,
Գնան, թոխր այս վշտալի աշխարհից:
Գնան գախր մի այլ աշխարհ՝ սպասիր,
Մեր զարտերը, մեր ցաւերը հօն պատմիր:

ՔԻԻՐԴԵՐԻ ՄԻՋԻՆ

Ո՛ւր են արդեօք, ո՛ւր են իմ ընկերներս,
Հերոս, քաջ կուսոյ իմ եղբայրներս,
Ո՛հ շատ են ցաւում իմ խոր վէրքերս,
Չկան չեմ տեսնում, ո՛ւր են քաջերս:
Աչքս բաց արի, տեսայ միայնակ
Քիւրդերի միջին վիրաւոր ընկած
Տեսայ չորս կողմս անթիւ քիւրդերի
Դիակներ են փռւած գազան ձեւերի:
Տեսայ հազարաւոր քիւրդի զիակներ,
Ուրախացաւ սիրտս, մոռացայ իմ վըշտեր,
Տեսայ քաջութիւնը իմ ընկերներս
Ուրախ արտասուք լցեց աչքերիս:
Եարար ո՞ղջ են արդեօք, եթէ գիտանայի
Իմ քաջ եղբարքս գոնէ տեսնէի:
Այն առիւծներին մէկ էլ զբէկէի՝

Եւ նրանց ձեռքով գերեզման իջնէի:

ԶԻՆՒՈՐԻ ՄԱՀԸ

Ա՛խ. մայրիկ ջան, ես չը տեսայ
Մէկ ուրախ օր կեանքիս մէջ,
Նպատակիս դեռ չը հասայ
Վէրքեր գիզեց սրտիս մէջ:
Մեծացրի՛ւ փայփայանքով
Սնուչ քաղցր քո կաթով.
Գլխիս վերև միշտ երգեցիր
Թաց աչքերս սրբելով:
Բայց հիմայ եկ, տես քո սրբուն,
Տես ցաւալի վիճակը,
Վեր առ, սեղմիր կուրծքիդ ամուր,
Ա՛ն քո վերջին կարօտ:
Ե՛կ, շուտ հասիր, մին էլ տեսնեմ՝
Քանի շունչ կայ բերանս,
Մին էլ տեսնեմ, գուցէ մեռնեմ,
Շատ խորունկ են վէրքերս:
Ե՛կ քո ձեռքով զիր գերեզման
Որդուդ սառած զիակը,
Ամբողջ լեռներ թող քեզ հետ լան,
Երբ ծածկէք իմ զիակը:
ՆՈՐԻ՞Յ ՀԱՄԲԵՐԵԼ,⁰
Երբոր թշնամին մեզ շրջապատած
Ջարդում, փշրում է սրեր վեր տօած,
Սէր վեր առած մեզ մաս-մաս մորթում,
Նորից համբերել, վա՛յ մեր օրերուն,
Նորից համբերել:
Երբ միտք ենք անում մեր տանջանքները

Թշնամուց քաշած այն հարւածները
 Մինչև երբ տանկեք մենք այս ցաւերը,
 Նորից համբերենք, սիկ է մեր աչքը:
 Ասացէք, եղբարք, նորից համբերեի՞ր,
 Նորից թշնամուն մեզ գլուխ ծոկը,
 Արդէն ժամանակ է, ինչ՞ու սպասել,
 Ինչ՞ու մեզ ծանր լուծից չազատել:

ՄՈՒԹ ԳԻՇԵՐ ԷՐ

Բուք ու մռայլ մութ գիշեր էր,
 Երբ վայր իջած լեռներից,
 Դարդոտ սիրտս լիքը վերք էր,
 Խոր անխ քաշի իմ սրտից:
 Մաստիկ մութ էր, գէնքը ձեռքիս
 Մարի լանջում ես կանգնած՝
 Անբուժելի վէրքը սրտիս՝
 Սիրտս վրէժով էր լցւած:
 Մութ էր սաստիկ, լուսին չկար,
 Աստղեր չկար երկնքում,
 Օրն էր ախուր. մութ ու խաւար,
 Նման գարգոտ իմ սրտին:
 Չկայ մէկը խաբար տանի,
 Ազիս եարիս խղճալի,
 Չկայ մէկը, որ ձաբ անի
 Բացւած վէրքին իմ սրտի:

ՍԱՍՏԻԿ ՔԱՄԻՆ

Վարդի նման դեռ նոր բացւած
 Տերեւներով զարդարւած,
 Բայց ի՞նչ անեմ, բողբոջի ձեռից
 Ելայ ընկայ սարէ սար:

Փչեց սարից սաստիկ քամին,
 Խկտա սուլելով, վշալով,
 Չատեց ինձնից իմ ընկերին,
 Թողեց լալով ողբալով:
 Շատ լաց եղայ, շատ ողբացի,
 Լսող չեղաւ իմ ձայնին,
 Տերեւներս փաթաթեցի,
 Պոկեց, տարաւ ինձ քամին:
 Տես նայեցի, տեսայ ախուր
 Տերեւներս գլխակոր,
 Տեսայ երգիչ իմ սոխակին
 Լաց էր լինում ողբագին:

ՈՐԲ ՊԱՏԱՆԻՆ

Որբ մնացած որբ պատանին
 Ման էր գալիս շօլերում,
 Ման էր գալիս, լաց էր լինում,
 Փնտռում խղճուկ մայրիկին:
 Ամոյ էր սաստիկ, անձրև կուգար,
 Խեղճը մնաց մուրում,
 Խեղճ որբուկին օգնող չկար,
 Գնում էր լալով նա քաղցած:
 Ո՞ր էր արդեօք նրա մայրը,
 Ինչ՞ու թողեց չօլերում,
 Թէ նրան էլ անգութ քիւրդեր
 Փախցրին տարան սարերում:
 Բայց խեղճ որբը գեռ ման կուգար
 Դեռ փնտռում էր մայրիկին
 Ման էր գալիս, լաց էր լինում
 Ուժ չմնաց ոտքերում:
 Յանկարծ գտաւ մայրը մեռած՝

Արիւնաշաղագ վայր ընկած,
 Լացեց ընկաւ կուրծքի վրայ
 Խեղճն նւազ ու քաղցած:

ՄՈՒԹ ԱՆՏԱՌՈՂՄ

Կանգնած էի տխուր, տրտում,
 Յանկարծ լսի մի խուլ ձայն,
 Ուշք գարձրի մութ անտառում
 Տեսայ հայի հառաչանք էր այն:
 Վեր բարձրացայ սարի գլխին,
 Մտայ խորն անտառի,
 Տեսայ գետնին վայր էր ընկած
 Հայ պատանին զարնւած:

Լաց էր լինում, անխ էր քաշում,
 Ձեռքն վէրքին գնելով՝
 Ա՛խ էր քաշում, ետրն էր կանչում,
 Թաց աչքերն սրբելով:

Յանկարծ տեսաւ նա ինձ կանգնած
 Ձեռքն մեկնեց զողալով,
 Ասեց, խնդրեց հեկեկալով՝
 Կուրծքի վէրքն բաց արած:
 Ո՛վ հայ եղբայր, ձեռքդ մեկնիր,
 Վեր կացրու մի վայրկեան,
 Խօսքեր ունիմ, գոնէ լսիր,
 Ապա նոր գիր գերեզման:
 Ահա, առ քեզ այս մատանիս,
 Տար սիրելոյս տուն յանձնիր,
 Եւ իմ խղճուկ ձեր մայրիկիս
 Վերջին բարեւ գուն յանձնիր:

ԻՆՁԻ ՀԱՄՍՐ ԴԵՌ ԳԱՐՈՒՆ ՉԷ ԲԱՑԻԵԼ

Նորից բացեցաւ գարունն ուրախ,

Նորից բացեցան վարդերն դալար,
 Ուրախութիւն, հրճւանք լցեց ողջ աշխարհ,
 Բայց զեռ իմ սիրտն տխուր է, խաւար:
 Ինձի համար զեռ գարուն չէ բացել,
 Ոչ էլ ինձ համար զեռ արե ծագել,
 Չկայ ինձ համար ոչ վարդ, ոչ ծաղիկ,
 Դեռ ինձ պէտք է կուել, փրկել հայրենիք:

Շատ ժամանակ չէ իմ արօր, գութան
 Անգութ Քիւրդերն քաշեցին տարան,
 Եւ շատ մատաղահաս հարս ու աղջիկներ
 Քիւրդերի ձեռքին թափում արցունքներ:
 Այժմս ինձ պէտք է փրկել խեղճերուն,
 Ինձ պէտք է սրբել նրանց արցունքը
 Ահա նոր կուգայ ինձ համար գարուն
 Կը բացւի սրախ վարդը դալարուն:

Ա՛Ն, ԹԷ ԼԻՆԷՐ ԳՈՆԷ ՄԻ ՕՐ

Ա՛խ, սիրուհիս, ես քո տեղ
 Չէնքս եմ արել ինձ ընկեր,
 Գլխիս տակին ես բարձի տեղ
 Բարն եմ զրել բարձի տեղ:
 Գիշեր ցերեկ հանգիստ չունիմ
 Գնդակներ ձայնիցը
 Դարգոտ սրախ ընկեր չունիմ
 Մխ եմ քաշում սրտիցս:

Ո՛ւր ես արգեճք, թէ տեսնէիր
 Իմ ցաւալի տանջանքս,
 Գոնէ դուն քեզ բաց անէիր
 Խաւար, տխուր իմ սիրտը:
 Ետար պիտ գայ արգեճք մի օր՝
 Նորից տեսնենք ազատ կեանք,

Պիտ գոյ արդեօք այն ուրախ օր,
Հէրիք ինչքան տանջեցանք:

ԹՈՂԷՔ, ԱՄՊԵՐ

Ո՛հ, ինչ սաստիկ մութ գիշեր էր,
Լուսին չկար երկնքում,
Սև սև ամպեր երկինք պատած
Խեղճ լուսնին են բանտարկած:
Սիրտս տխուր, վշտերս շատ,
Կանգնած լուսնին կսպասեմ
Բայց նա չկայ ամպերն են շատ,
Սիրտս տխուր լալիս եմ:

Սաստիկ մութ էր, մէկ ճար չկար,
Ճամբայ չկայ, ո՛ր գնամ,
Վէրքս շատ, օգնող չկայ,
Դարտերս շատ, ընկեր չկայ,
Աէք, ցաւերս ո՛ւմ պատմեմ:
Ա՛խ, մութ ամպեր, անգութ ամպեր,
Թողէ՛ք լուսնիս թող դուրս գայ,
Թողէ՛ք ամպեր ինձ խղճացէք,
Վիրաւոր եմ, մի տանջէք:

Անգութ ամպեր, ինչ էք տանջում,
Ինչո՞ւ դուք յետ չէք փախչում,
Թողէք լուսնիս դարտեր ունիմ
Ցաւերս նրան պիտ պատմեմ:

ՀԱՅԻ ՎԻՃՍԿԸ

Հայ ազգի սիրտը արունով լցւած՝
Առնրի աչքերն արցունքով լցւած՝
Անգութ քիւրդերի աճից սարսափած
Ընկած են պանդուխտ, եղած ցիր ու ցան:

Թողած են ամբողջ քիւրդերի ձեռն
Ոմանք տուն ու տեղ, ոմանք քոյր, եղբայր,
Խղճուկ Հայաստանը թողած լալագին,
Փախչում են քիւրդերի աճից սարսափից՝
Սարերի միջին քաղցած ու ծարաւ,
Մնացել են սնյոյս չունին օգնական
Սպասեցին օգնութեան օգնող էլ չեղաւ
Լալով, սղբալով եղան ցիր ու ցան:
Շատ ու շատ երէխէք ձեռք ձեռքի բռնած
Լալով ման կուգային իրանց ծնողաց,
Մերկ ու բորիկ ձեռներն մրսած
Ման էին գալիս մօլորւած, քաղցած:

Մ Օ Ր Ս ՈՒ Ք Ը

Հերոսի պէս զէնք վէր առար,
Թշտաւ մօրդ մտացար,
Կուրծքիցդ վէրքեր գուն ստացար:
Թայ աչքերով քեզ ման եկայ,
Վիրաւորւած քեզ գտայ,
Վէրքը կուրծքիդ, զէնքը կողքիդ,
Քեզ թառամած ես գտայ:
Վէր կաց, բալէս, աչքերդ բաց,
Խղճան մօրդ ծերացած
Վէր կաց կապեմ քո վէրքերդ,
Արիւնահոս ճակատդ:
Սպասում են քո քոյրերդ
Քո խեղճ փոքրիկ եղբայրներդ
Գնանք, գրկիր, քո որբերդ,
Խղճան, բալէս, բաց աչքերդ:
Ա՛խ, իմ խօսքերս իզուր են անցում,
Քնած է բալէս, նա ինձ չի լսում,

Հանգիստ, անխօսով աչքերն փակած՝
Արիւնից քողն երեսին քաշած:

Է Ս Է Լ Կ Ը Գ Ն Ա Յ

Մի յուսահատուիր, ո՞վ քաջ հղբայրս,
Թէպէտ ես գիտեմ, շատ են ցաւերս,
Պէտք է սպասել այս սև օրերին
Գուգայ ուրախ օր այս դառն օրերին:
Կը գնան կանցնեն այս սև օրերը
Սիրով պիտ տանենք ձախօրդ օրերը,
Պէտք է սպասել առանց տրտունջի,
Մի օր էլ կուգայ ուրախ օր պարի:

Մութ գիշեր էր, լուսին չկար,
Ամպ էր պատել երկինքը,
Դարզոտ սրտիս ընկեր չկար,
Շատ տխուր էր իմ սիրտը:
Փչեց սարից սաստիկ քամին,
Սիրտս պցեց սարսուռը,
Հեռու տարան իմ սիրածին,
Նարոզ թողին իմ սիրտը:
Սաստիկ մութ էր, աստղ էլ չկար,
Ամպն էր միայն գոսգոսում,
Ամպն էր միայն տխուր ձայնով
Ինձ վշտակից նա գառնում:
Կարծես նա էլ ինձի նման
Դարդեր ունէր իւր սրտում,
Դարդեր ունէր գուցէ շատ խոր,
Որ իմ դարտին չէր նման:

ՀՈՎ ԱՐԷՔ ՍԱՐԵՐ ՉԱՆ

Հով արէք, սարեր ջան, սիրտս տխուր է,
Ման գուգամ, չեմ գտնում եարս ձրտեղ է
Զգիտեմ նա մեռած է, թէ վիրաւոր է,
Հով արէք, սարեր ջան, սիրտս տխուր է:
Ահա մէկ տարի է, ես խապար չունեմ,
Մաշեցաւ կեանքս, գլեման էլ չունիմ,
Ո՞վ գիտէ, եարար, արդե՞ծք պիտ տեսնեմ
Հով արէք, սարեր ջան, սիրտս հովացնեմ
Ման եկայ սարերն տեսայ գիակներ,
Տեսայ վայր ընկած անթիւ գիակներ,
Լցեցաւ սիրտս, թափի արցունքներ
Հով արէք, սարեր ջան, շատ են իմ վշտեր:
Տեսայ չորս կողմս, ման եկայ եարիս,
Յետ գառայ տխուր արցունքն աչքերիս:
Ո՞վ գիտէ, թշնամին տարաւ իմ եարիս:
Թէ գիտ կուտում է, ո՞վ Տէր, գու հասնես:


Մշու դաշտում ման կուգայի
Վիրաւորւած՝ ես տխուր,
Յանկարծ լսի խուլ ձայների
Հառաչանքներ ու արցունք:
Դէն նայեցի, տեսայ տան մէջ
Լցրած փոքր մանուկներ,
Եւ կատաղի կարմիր բոցեր
Բարձրանում են օդի մէջ:
Մի քիչ հեռու տեսայ կանայք
Գետնի վրայ են փռւած,
Ոմանք քաղցից են նւագած՝
Ոմանք խոր վէրք սոսցած:
Մի քանի տեղ լաց են լինում,
Թշուառ կանայք ողբապին,

Կորցրած սրբոց ման էին գալիս,
 Որ շուտ փախչեն, ազատեն:
 Յանկարծ դտան իրանց որդոց
 Կրակի մէջ այրեած,
 Ա՛խ քաշեցին ընկան գետին,
 Ուշաթափեած, այլայլեած:

Անգուլթ քիւրդը չէր խնայել
 Ոչ ձերերին, ոչ տղայոց,
 Մշու դաշտը ծով էր դարձել
 Հայի անմեղ արիւնով:
 Էլ վայել չէ՛ մեզ համբերել
 Պէտք է մեզ զէնք վեր առնել,
 Հայաստանը աւեր դարձած՝
 Պէտք է վրէժ մեզ լուծել:

ՅԻՇԱՏԱԿ ԸՆԿԵՐԻՍ

Տալիս հմ անկեղծ սիրոյ ընկերի
 Պահես յիշատակ իրրև համբոյրի,
 Չը մոռանալ, եղբայր, մեզ մինչ յաւիտեան
 Ինձմէն այս քեզ մօտ յիշատակ լինի:
 Ընկերական ծաղիկ թող ձեզ մօտ ֆայ,
 Եղբայրական համբոյր ձեր կուրծքի վերայ,
 Մէկ օր և իցէ ձեր մաքուս յիշէք
 Սրան նայելիս՝ ձեր փափագն առնէք:
 Թող չը կորչի մեր սէրն յաւիտեան,
 Նա միշտ մեր սրտին ֆայ անպայման,
 Ինչպէս կը բացւի վարդն մայիսեան,
 Այս էլ թող լինի մեզ սիրոյ նշան:
 Չը մոռանաս, եղբայր մեր սիրոյ կապը,
 Մի գուցէ մեզ վրայ պատէ մութ ամպը,
 Ամեն ժամ յիշիր, մի մոռանար ինձի,
 Որ բազը մեզի նեակց այս բազը:
 Ընդունիր սա քեզ ինչպէս մի ծաղիկ,
 Որպէս եղբօրիցդ ընծայ մի փնջիկ,
 Թող լինի մի վէճի, պահիր քո մօտիդ,
 Սա շքանշան է, միշտ պահիր մօտիդ:
 Թող Մամբրէի հրեշտակն մեզ հսկէ,
 Անկեղծ սիրով և անխուով պահէ,
 Ուրախ սրտով, ատողջ կեանքով հանապաղ.
 Եւ թող տայ մեզ պայծառ արև, պայծառ օր:



Am 57 108

am
6041

9504

15809

ИНСТИТУТ
ВОСТОЧНО-ЕВРОПЕЙСКИХ
ИЗУЧЕНИЙ
Академии Наук
СССР

ԳԻՆՆ Է 10 40Պ.

2013

Գրքեր՝ Александрополь
Священнику А. Хачванкянцу

